

Հայ Կաթողիկէ Պատրիարք Հօր Այցը Երուսաղէմ

17 Սեպտեմբեր 2005
Երուսաղէմ

17 Սեպտեմբեր 2005ի կէսօրէ ետք, Սաղիմահայ Կաթողիկէ համայնքի Յաւագին Տիրամօր եկեղեցւոյ գաւիթի մէջ հաւաքուած աւելի քան 200 ներկաններ հետեւեցան շրջան ժամանած Հայ կաթողիկէ Պատրիարք Ներսէս Պետրոս ԺԹի աղօթքին ու քարոզին, որուն ընթացքին ան անդրադարձաւ Երուսաղէմի Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ հիմնադրութեան 100ամեակին ու տարուած շինարարական հսկայական աշխատանքին թէ եկեղեցւոյ գետնաշարկի ստորերկրեայ պեղումներուն, որոնք մէջտեղ բերած էին միջանցք մը որ կը միացներ Քրիստոսի խաչելութեան ճամբուն Յրդ ու 4րդ կայանները: Ինքնին բացառիկ իրագործում մը բոլոր մասնագէտներու վկայութեամբ:



Եկեղեցւոյ արարողութեան ընթացքին խորանի մօտ հիւրերու յատուկ նստարանները գրաւած էին Կաթողիկէ եկեղեցւոյ բարձրաստիճան եկեղեցականներ առաւել Ասորի, Յուն ու ուրիշներ իսկ Հայոց Առաքելական աթոռը կը ներկայացներ Սամուէլ վրդ. Աղոյեանը: Ի սպառ փնտրեցինք Հայ եպիսկոպոս մը որպէս պատշաճ ներկայացուցիչ Հայոց Ս. Յակոբայ Առաքելական Աթոռի:



Ելէկտրական թէքնիք խանգարումի պատճառաւ կարելի չ'եղաւ իջնել եկեղեցւոյ ստորերկրեայ միջանցքը ու պաշտօնական բացումը կատարել այդ հսկայական գործին, որուն համար ի մասնաւորի ժամանած էին բոլորը այդ ժամուն այդ վայրը: Այսուհանդերձ, Պատրիարք հայրը մոմերու օգնութեամբ կատարեց իր աղօթքը թէ շրջանը ու բարձրացաւ վեր գաւիթ ուր սկիզբ առաւ օրուան ընդունելութիւնն ու հիւրասիրութիւնը, որը ատեղծեց բացառիկ առիթ Պատրիարք Հօր փոխ ծանօթացման թէ յիշատակի նկարահանման:

Ամէն. Տէր Ներսէս Պետրոս Պատրիարքը իր Երուսաղէմ այցի ընթացքին նաեւ հիւրը եղաւ Երուսաղէմի Առաքելական Աթոռի գահակալ Թորգոմ Պատրիարք Հօր:

Այսուհանդերձ, այս նշանակելի այցը Ս. Աթոռ անախորժ աւարտ մը ունեցած է երբ զլացուած է առիթը, աւելին մերժուած է փափաքը, Կաթողիկէ Պատրիարք Հօր նաեւ այցելելու Ս. Յակոբայ եկեղեցին:

Մինչև այս տողերի արձանագրությունը յստակ բացատրական մը չ'ունինք այդ անախորժ միջադեպը արդարացնելու եթէ կարելի է այդ երբէք: Հեղինակներու թէ հեղինակություններու մասին շատ խօսք կայ, գուշակությունները շատ են թուելու տեղը չէ, պարզապէս կը կասկածինք թէ այդ միջադեպը որեւէ նպաստ թողուց որեւէ մէկուն:



Հ.Մ.Ը.Մ. Երուսաղէմի Սկաուտները ներկայ օրուայ հանդիսութեան: